ԲԱՑԵԼՈՎ ՆԱՏՕ-Ի ԴՈՒՌԸ

Ինչպես վերակառուցվեց Դաշինքը
նոր դարաշրջանի նախաշեմին

OPENING NATO'S DOOR

How the alliance remade itself
for a new era

Ռոնալդ Ասմուս
Ronald D. Asmus

Լրամշակված հրատարակություն
Երևան
2023

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար լորդ Ռոբերտսոնի նախաբանով
Արտաքին հարաբերությունների խորհրդի մատենաշարից
Կոլումբիայի համալսարանի հրատարակչություն
Նյու Յորք

Այս գիրքը նվիրվում է Էրիկին

ՀՏԴ 327:94(4+7)
ԳՄԴ 66.4+63.3(0)
Ա 746

Ա 746 Ասմուս Ռոնալդ
Բացելով ՆԱՏՕ-ի դուռը. ինչպես վերակառուցվեց Դաշինքը նոր դարաշրջանի նախաշեմին / Ռ. Ասմուս.- Եր.: Մեդիամաքս մեդիա քոմփանի, 2023.- 588 էջ:

«Բացելով ՆԱՏՕ-ի դուռը» գիրքը Հյուսիսատլանտյան դաշինքի ընդլայնման գործընթացը ներկայացնում է ներսից: Ռոնալդ Ասմուսն այն ներկայացնում է թե՛ որպես տեսաբան, թե՛ որպես իրադարձությունների անմիջական մասնակից: 1990-ականների սկզբին նա առաջ էր քաշել ՆԱՏՕ-ի ընդլայնման գաղափարը, իսկ հետո, զբաղեցնելով ԱՄՆ պետքարտուղարի փոխօգնականի պաշտոնը, զբաղվում էր դրա իրականացմամբ:

ՀՏԴ 327:94(4+7)
ԳՄԴ 66.4+63.3(0)

Այս գիրքը հայերեն հրատարակվել է Էստոնիայի արտաքին գործերի նախարարության և Լիտվայի ազգային պաշտպանության նախարարության աջակցությամբ:

Publishing of this book in Armenian was kindly supported by the Foreign Ministry of Estonia and Ministry of National Defence of Lithuania.

REPUBLIC OF ESTONIA
MINISTRY OF FOREIGN AFFAIRS

MINISTRY OF NATIONAL DEFENCE
REPUBLIC OF LITHUANIA

ISBN 978-9939-1-1647-1

© 2002, Քոլամբիա Յունիվերսիթի Պրեսս, բոլոր իրավունքները պաշտպանված են
© 2023, Տրանսատլանտյան նախաձեռնությունների հայկական կենտրոն/
Մեդիամաքս մեդիա քոմփանի

Այս գրքի հայերեն հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են
Տրանսատլանտյան նախաձեռնությունների հայկական կենտրոն ՀԿ-ին
և Մեդիամաքս մեդիա քոմփանի ՍՊԸ-ին

Բովանդակություն

Հրատարակչի կողմից i
Հեղինակի կողմից iii
Նախաբան vii
Երախտագիտության խոսք xiii
Մի քանի խոսք աղբյուրների մասին xvii
Ներածություն xxi
Գիրք I Ծագումը 1
Գիրք II Բանավեճի սկիզբը 27
Գիրք III Ռուբիկոնի անցումը 91
Գիրք IV Երկնպատակ ճանապարհին 157
Գիրք V Դեպի նոր ՆԱՏՕ 213
Գիրք VI ՆԱՏՕ-Ռուսաստան եզրափակիչ խաղը 283
Գիրք VII Դեմ դիմաց Մադրիդում 343
Գիրք VIII Քաղաքական ճակատամարտը 405
Եզրակացություն 467
Ծանոթագրություններ 494

ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ

Հարգելի՛ ընթերցող,

Ուրախ եմ ձեր ուշադրությանը ներկայացնել Ռոնալդ Ասմուսի «Բացելով ՆԱՏՕ-ի դուռը» գրքի հայերեն երկրորդ հրատարակությունը: Առաջինը լույս էր տեսել 15 տարի առաջ՝ 2008 թվականի հունիսին:

Ռոնալդ Ասմուսի հետ ծանոթացել էի 2004 թ. հուլիսին, երբ նա այցելել էր Երևան ԱՄՆ Մարշալի գերմանական հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Այնուհետև մենք գործնական կապեր հաստատեցինք, իսկ հետո դարձանք ընկերներ, ինչի համար երախտապարտ եմ ճակատագրին:

«Բացելով ՆԱՏՕ-ի դուռը» գիրքը Դաշինքի ընդլայնման ոչ միանշանակ ու բարդ գործընթացը ներկայացնում է «ներսից»: Ռոնալդ Ասմուսն իր գրքում ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը ներկայացնում է թե՛ որպես տեսաբան, թե՛ որպես իրադարձությունների անմիջական մասնակից: 1990-ականների սկզբին Ռոնալդ Ասմուսն այն մարդկանցից էր, որոնք գիտական շրջանակում բարձրացրին ՆԱՏՕ-ի ընդլայնման գաղափարը, և այն շուտով տեղափոխվեց քաղաքական դաշտ: Մի քանի տարի անց Ասմուսը ԱՄՆ նախագահ Քլինթոնի վարչակազմում աշխատելու հրավեր ստացավ և զբաղեցնելով ԱՄՆ պետքարտուղարի փոխօգնականի պաշտոնը՝ սկսեց զբաղվել իր գաղափարների կյանքի կոչմամբ: Կարծում եմ՝ այս հանգամանքը առավել արժեքավոր է դարձնում գիրքը: Արժեքավոր է նաև այն փաստը, որ «Բացելով ՆԱՏՕ-ի դուռը» գիրքը հայերեն է թարգմանել Վիգեն Սարգսյանը՝ միջազգային հարաբերությունների Հայաստանի լավագույն մասնագետներից մեկը:

2022 թվականին, երբ Կրեմլը պատերազմ սկսեց Ուկրաինայում, ՌԴ նախագահ Պուտինը և նրա վարչակազմի անդամները հայտարարում էին, որ ստիպված էին դա անել՝ կանխելու ՆԱՏՕ-ի մոտեցումը Ռուսաստանի սահմաններին: Այդ ժամանակ մտածեցի, որ ճիշտ կլինի վերահրատարակել

«Բացելով ՆԱՏՕ-ի դուռը» գիրքը նաև այն պատճառով, որ Ռոնալդ Ասմուսը մանրամասն ներկայացնում է, թե ինչպես էին Դաշինքի ընդլայնման հարցերը քննարկվում Մոսկվայի հետ:

Քանի որ Ասմուսը բավականին մեծ դեր էր խաղացել ՆԱՏՕ-ին Բալթյան երկրների անդամակցության գործում, առաջին հրատարակությունը հովանավորելու համար դիմել էինք Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի կառավարություններին: Երբ առաջացավ գիրքը վերահրատարակելու գաղափարը, այն ներկայացրի Հայաստանում Լիտվայի դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեին: Հենց նրա ջանքերի շնորհիվ այս հրատարակությունն իրականություն դարձավ: Ինգան նաև օգնեց ստանալ Էստոնիայի արտաքին գործերի նախարարության աջակցությունը:

Ցավոք, Ռոն Ասմուսն իր գրքի հայերեն երկրորդ հրատարակությունը չի տեսնի. նա մահացավ 2011 թվականին, երբ ընդամենը 53 տարեկան էր:

Մեր ծանոթությունից ընդամենը մեկ տարի անց Ռոնն ինձ առաջարկեց դառնալ Սևծովյան տարածաշրջանի համար ստեղծված աշխատանքային խմբի անդամ, որում ես պատիվ ունեցա գրեթե 1.5 տարի ներկայացնել Հայաստանը: Աշխատանքն այս խմբում ինձ տվեց բազմաթիվ արժեքավոր ծանոթություններ ամենատարբեր մարդկանց հետ: Ռոնն իմ առջև շատ դռներ բացեց, և շատ բաներ, որ նախկինում անհնար էին թվում, միանգամայն հնարավոր դարձան:

Նախավերջին անգամ Ռոնին հանդիպեցի 2009 թ. փետրվարին Մյունխենի անվտանգության հարցերով կոնֆերանսում: Նրան փոխանցեցի իր գրքի հայերեն տարբերակը: Ռոնը շատ զուսպ մարդ էր, բայց զգացվում էր, որ իրեն չափազանց հաճելի է տեսնել այդ գիրքը հայերեն: 2008 թվականին պետք է Երևան գար՝ մասնակցելու գրքի շնորհանդեսին, սակայն չկարողացավ: Դրանից հետո հաճախ էր ասում ինձ. «Չեմ մոռացել, որ պարտք եմ քեզ՝ պետք է Հայաստան այցելեմ»: Վերջին անգամ Ռոնին տեսա 2009 թ. դեկտեմբերին. պատահական հանդիպեցինք Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում: Նա լավ տեսք ուներ և ասում էր, որ ապաքինվում է բազմաթիվ բուժումներից հետո: Ավաղ, Ռոնին չհաջողվեց հաղթել հիվանդությանը: Բայց նրա ժառանգությունը կենդանի է, և հայերեն գրքի վերահրատարակությունը դրա ապացույցներից է:

Արա Թադևոսյան

Մեդիամաքս մեդիա-ընկերության տնօրեն,
Տրանսատլանտյան նախաձեռնությունների հայկական կենտրոնի նախագահ
Ապրիլ, 2023 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ուրախ եմ իմ գրքի հայերեն հրատարակության առթիվ: Դա ինձ համար գաղափարի և տեսլականի ուժի վկայությունն է՝ մի տեսլականի, որով Եվրաատլանտյան համայնքը բացվեց Արևմուտքի հետ կապվել ձգտող նոր ժողովրդավարությունների առջև: Այս գիրքը նկարագրում է ավելի քան մեկ տասնամյակ առաջ տեղի ունեցած բանավեճերն ու իրադարձությունները, երբ ծավալվեցին և հաղթանակով ավարտվեցին ՆԱՏՕ-ի ընդլայնման շուրջ առաջին քաղաքական մարտերը: Շատ դրական նշան է, որ այն դեռևս արդիական է մեկ այլ աշխարհամասում:

Ազնիվ լինելու համար պետք է հաստատեմ, որ եթե մեկ տասնամյակ առաջ ինձ որևէ մեկը հարցներ, թե արդյոք ես կարող եմ պատկերացնել, որ Հայաստանին կհետաքրքրի ՆԱՏՕ-ի հետ ավելի անմիջական կապեր ունենալու հնարավորությունը, թերահավատ կլինեի: Նույնը վերաբերում է Վրաստանին կամ Ադրբեջանին: Այն ժամանակ Արևմուտքում բանավեճն ամբողջությամբ կենտրոնացած էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի վրա, և այնտեղ էր ավարտվում մեր տեսլականը: Բայց ՆԱՏՕ-ի ընդլայնման ճարտարապետները բավականաչափ խելամիտ էին՝ հասկանալու համար, որ ընդլայնումը պետք է մնա բաց գործընթաց, և որ մենք պետք է բաց թողնենք ՆԱՏՕ-ի դռները ապագա հնարավորությունների համար: Պատմությունը հաճախ է անակնկալներ պատրաստում մեզ համար:

Եվ այն, ինչ մենք տեսանք վերջին տասնամյակի ընթացքում, ընդլայնման հաջողությունն էր: Այդ հաջողությունն օգնեց մեզ ոգեշնչել ժողովրդավարական առաջնորդների նոր սերունդ այնպիսի երկրներում, որոնք նախկինում չէին էլ համարձակվի մտածել, որ հնարավոր է շարժվել դեպի Արևմուտք, և որոնք Արևմուտքում էլ չէին դիտարկվում որպես Դաշինքի թեկնածուներ: ՆԱՏՕ-ի ընդլայնման և Եվրասիայում ու Հարավային Կովկասում ժողովրդավարության հաջողությունների համադրումը նոր մարտահրավեր դարձավ՝ ստիպելով մեզ կրկին լայն մտածողություն որդեգրել

և մեր քաղաքական տեսլականի սահմաններն ընդարձակել: Ես ողջունում եմ դա: Հենց այդպես է կերտվում պատմությունը:

Ինձ համար պատիվ է, որ գիրքս հասու է դառնում հայ ընթերցողին: Այս գիրքը բանական, քաղաքական և դիվանագիտական պատմության մեկտեղում է՝ անհատական զգացումների տպավորությամբ: Այն փորձում է բացատրել, թե ինչպես ծնվեց ՆԱՏՕ-ի ընդլայնման գաղափարը, ինչպես այն ընդգրկվեց ԱՄՆ-ի, ապա նաև ՆԱՏՕ-ի քաղաքականության մեջ, և ինչպես այդ քաղաքականությունն իրագործվեց՝ չնայած ներքին ու արտաքին լուրջ ընդդիմության առկայությանը: Դա մի օրինակ է, թե ինչպես փոքրամասնության կարծիքը կարող է դառնալ այս կամ այն հարցի շուրջ հիմնական մտածողություն և ի վերջո հաղթել շատ ցածր հավանականության պարագայում:

Մենք այս գրքին ավելացրել ենք վերջաբան՝ 2008 թ. հունվարին իմ կողմից «Ֆորին Աֆեյրս» («Արտաքին քաղաքականություն») ամսագրի համար հեղինակած հոդվածի տեսքով: Այդ հոդվածը որոշ առումով իրավահաջորդն է 1993 թ. աշնանը նույն ամսագրի համար իմ կողմից համահեղինակած մի հոդվածի, որն առանցքային դեր խաղաց ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցի շուրջ հանրային բանավեճ ծավալելու գործում: Այս նոր հոդվածն իմ փորձն է քաղել ընդլայնման վերջին տասնամյակի դասերը և կիրառել դրանք Եվրասիայի և Սևծովյան տարածաշրջանի, այդ թվում՝ Հայաստանի ապագայի համար: Հուսով եմ, որ ընթերցողներին էլ հետաքրքիր կլինի:

Ես հույս եմ տածում, որ այս գիրքը կօգնի կրթել հայ մտավորականների և քաղաքական գործիչների երիտասարդ սերնդին ՆԱՏՕ-ի և դրա ընդլայնման գործընթացի պատմության հարցերում: Հուսով եմ, որ կոգևորի հայերի այս նոր սերնդին՝ փնտրել ՆԱՏՕ-ի հետ իրենց երկրի դրական հարաբերությունների բնորոշումը և կապել իրենց վեհ երկիրն ավելի սերտ կապերով Արևմուտքի ու Ատլանտյան դաշինքի հետ:

Ես ցանկանում եմ շնորհակալությունս հայտնել առանցքային դեր կատարած այն մարդկանց, ովքեր հնարավոր դարձրին իմ գրքի հայերեն հրատարակությունը: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում իմ ընկերոջը և գործընկերոջը՝ Արա Թադևոսյանին, ում գաղափարն էր հրատարակել գիրքը հայերեն, առանց նրա օգնության այս ծրագիրը երբեք չէր իրականանա: Հայաստանի մասին իմ տեղեկությունների մեծ մասով ես պարտական եմ նրա կողմից ստեղծված «Մեդիամաքս» լրատվական գործակալությանը, որի նյութերը պարբերաբար ընթերցում եմ: Ցանկանում եմ նաև երախտագիտությունս հայտնել Վիգեն Սարգսյանին

և դաշինքների շարունակական կարևորությունը: Այսօր արևմտյան ժողովրդավարությունները դիմակայում են նոր՝ գոյությունն իսկ վտանգելու ներուժ ունեցող սպառնալիքների՝ ի դեմս ահաբեկչության և մասսայական ոչնչացման զենքի: Մեր Դաշինքը պետք է արդիականացվի և ձևափոխվի վտանգին դիմակայելու համար, եթե մենք պատրաստվում ենք արդարացնել այն սկզբունքները, որոնց հիման վրա ժամանակին ձևավորվել էր ՆԱՏՕ-ն: Այս ձևափոխումը չպետք է վերաբերի միայն նոր ռազմավարությունների կամ աշխատակարգերի մշակմանը: Այն առաջին հերթին պետք է ներառի նոր անհրաժեշտ ռազմական կարողություններ ստեղծելու վճռականություն: Սա մարտահրավեր է ինչպես ՆԱՏՕ-ի անդամ դաշնակիցների, այնպես էլ անդամակցություն հայցողների համար: Դեռևս երիտասարդ այս դարն արդեն իսկ մեզ դասեր է մատուցել, որոնք մենք պետք է հիշենք՝ շարունակելով ՆԱՏՕ-ի արդիականացումը. պաշտպանությունն էժան չի լինում:

«Բացելով ՆԱՏՕ-ի դուռը» գրքում ՆԱՏՕ-ի արդիականացման առաջին փուլի գիտակ Ռոն Ասմուսը ներկայացնում է Սառը պատերազմի ավարտից հետո ձևավորված գործընթացը: Նա ուղեկցում է մեզ Վաշինգտոնի բեմահարթակի հետնամաս և Եվրոպայի դիվանագիտական միջանցքներ՝ պատմելու համար 1990-ականների վաղ ու միջին շրջաններում տեղի ունեցող բանավեճերի պատմությունը: Այդ շրջանում ԱՄՆ-ը և նրա եվրոպական դաշնակիցները ջանում էին բնորոշել Դաշինքի հետսառըպատերազմական ռազմավարական ուղղությունը կոմունիզմի փլուզման պայմաններում: Նա մատնանշում է, թե ինչպես ՆԱՏՕ-ի ընդլայնման նախնական ազդակները եկան Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում դիվանագետ դարձած այլախոհների կողմից, և ինչպես այդ միտքն ի վերջո հավանության արժանացավ ԱՄՆ-ի և Եվրոպայի ղեկավարների շրջանում: Ամենակարևորը, նա մեզ ներկայացնում է ականատեսի վկայություններ ՆԱՏՕ-ի ընդլայնումը պատվաբեր գաղափարից քաղաքական իրողություն դարձնելու ընթացքում Վաշինգտոնում և նրա դաշնակից երկրներում տեսակետների զարգացման մասին:

«Բացելով ՆԱՏՕ-ի դուռը» վավերագրում է այն դիվանագիտությունը, մասամբ՝ դրամատիկորեն, որն ուղեկցում էր 1994 թ. հունվարին Բրյուսելում, առավել ևս՝ 1997 թ. հուլիսին Մադրիդում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովների նախապատրաստմանը: Միևնույն ժամանակ գիրքն ընդգծում է, թե ինչպես առաջին իսկ պահից ՆԱՏՕ-ի ընդլայնումն ավելին էր, քան Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում խաղաղության համախմբումը:

բնագիրը փայլուն կերպով հայերեն թարգմանելու համար: Առանձնապես շնորհակալ եմ Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի կառավարություններին ծրագրի ֆինանսավորումը հատկացնելու համար:

Ռոն Ասմուս

Մարտ, 2008 թ.